1919թ. մարտ 6-ին Գորիս հասաւ Հայաստանի կառավարութեան նշանակած Զանգեզուրի ընդհանուր կոմիսարը՝ փոխ-գնդ. Արսէն Շահմազեանը, որից յետոյ Զանգեզուրն այլևս կապւեց Երևանի հետ: Շահմազեանի պաշտօնը կէս գաղտնի էր. Ղարաբաղ—Զանգեզուր Ազրբէջանին կցել աշխատող անգլիացիների ճնշման տակ, Հայաստանի կառավարութիւնը պաշտօնական ձև չէր տալիս իր գործունէութեան Զանգեզուրում: Հակառակ դրան, Զանգեզուրը, երկրի միւս մասերին հաւասար, օգտւում էր Հայաստանի պետական միջոցներից:

Մարտ 31-ին Գորիսում հրաւիրւեց համազանգեզուրեան մի համագումար, ուր Ազգ. Խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը: Եւ նրա տեղ, ընդառաջ գնալով ժողովրդի միահամուռ փափագին, ընտրւեց Զանգեզուր—Ղարաբաղի Շրջանային Խորհուրդ անունով մի մարմին՝ այդ ձևով հանդիսաւորապէս նւիրագործելով Ղարաբաղ—Զանգեզուրի միութիւնը և այս երկրի կցումը Մայր-Հայաստանին: Շրջ. Խորհրդի անդամներ ընտրւեցին Ա. Շիրինեանը, Մ. Զաքարեանը, Յ. Տէր-Ունին, Խ. Դանիէլեանը (չորսն էլ դաշնակցական), Եր. Բագունց, Սահ. Տէր-Հայրապետեան (բոլշևիկ) և Ս. Մ.-Ստեփանեան (անկուս.): Ղարաբաղի կողմից խորհրդի մէջ մտան՝ Գեր. Բալայեանը, Եղիշէ Իշխանեանը, Մելիք. Եսայեանը, Աւ. Աստուրեանը և Արս. Բագունցը: Վերջիններս այդ ժամանակ՝ խուսափելով անգլիացիների հալածանքներից՝ գտնւում էին Գորիսում, որտեղից և հեռւում էին Ղարաբաղի անց ու դարձերին:

Վերակազմւեց երկրի ինքնապաշտպանութեան գործը: Շրջ. Խորհրդի անդամներից կազմւեց զինւորական խորհուրդ, իսկ սպաներից՝ գլխաւոր սպայակոյտ: Շրջաններում նշանակւեցին զինւորական հրամանատարներ՝ Սիսեանում Պօղոս Տէր-Դաւթեանը, Տաթևում՝ Խ. Մալինցեանը, Տեղ—Խնձորեսկում՝ Մ. Հիւսէյնեանը, Ղափանում՝ Յ. Տէր-Պետրոսեանը, Մեղրիում՝ Շահպազեանը: Կարգւեցին նաև ճակատապետներ՝ Զաբուղում, Զէյվա—Հագարակում, Բազարչայում, Նորս—Գոմբրիում:

Զուգընթացաբար տարւում էր նաև քաղաքացիական մասի կազմակերպական աշխատանքը: Գաւառապետ նշանակւեց Ն. Յովսէփեանը, օգնական և միլիցիապետ՝ Սաքօն: Միլիցիայի թիւը կրկնապատկւեց: Բացւեցին փոստատները և կանոնաւորւեց փոստային յարաբերութիւնը Երևանի հետ: Վերաբացւեց Գորիսի պետական գանձարանը: Հիմնւեց պետական վերահսկողութիւն: Վերաբացւեցին Գորիսի և Հանքերի հիւանդանոցները, բուժական կայաններն ու դեղատները: Սկսեց գործել զինւորական ատեանը:

Մինչև յուլիսի վերջերը կազմակերպական աշխատանքներն արդէն վերջացած էին: Օգոստոսին Շրջանային Խորհուրդը աշխատանքների բաժանում կատարեց իր անդամների միջև՝ հիմնելով հետևեալ վարչութիւնները. վարչապետ և ներքին գործերի վարիչ՝ Ա. Շիրինեան, օգնական՝ Ս. Մ.-Ստեփանեան, հաղորդակցութեան՝ ինժ. Ա. Բագունց, կրթական՝ Յ. Տէրունի, առողջապահութեան և խնամատարութեան՝ Ա. Աւետիսեան, օգն. Խ. Դա-